ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 12 փետրվարի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Վ. Պողոսյանի

Քննության առնելով քաղաքացի Վալերի Քոսակյանի դիմումի ընդունելիության հարցը,

**ՊԱՐԶԵՑ.**

1. Քաղաքացի Վալերի Քոսակյանը 01.02.2010թ դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասի «Դատախազի, դատավորի, դատախազության քննիչի» բառերով սահմանված դրույթների սահմանադրականությունը:

2. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է. «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասի «Դատախազի, դատավորի, դատախազության քննիչի» բառերը ընդունել որպես ՀՀ Սահմանադրության 6-րդ, 14.1-րդ, 34-րդ, 42-րդ հոդվածներին հակասող՝ ճանաչել անվավեր»:

Դիմողը նշում է, որ 2007 թվականի մայիսի 1-ից ուժի մեջ է մտել «Դատախազության մասին» ՀՀ գործող օրենքը: Համաձայն վերջինիս 75-րդ հոդվածի 1-ին մասի՝ 55-րդ հոդվածն ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի մեկից, իսկ մինչ այդ դատախազների աշխատավարձի հաշվարկը կատարվել է 1998 թվականի հուլիսի 1-ի՝ «Դատախազության

մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-15-րդ մասերին համապատասխան: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասը դասային աստիճան ունեցող դատախազների համար սահմանում է հավելավճար դատախազի, դատավորի և դատախազության քննիչի պաշտոնում աշխատած յուրաքանչյուր տարվա համար:

Դիմողի կարծիքով՝ վերոնշյալ դրույթի մասը՝ «դատախազ, դատավոր, դատախազության քննիչ» արտահայտություններով ձևակերպումը, սահմանափակում է դատախազության աշխատողի իրավունքները: Արդյունքում արհեստականորեն նվազեցվում է աշխատավարձի վերահաշվարկի ժամանակ աշխատանքային ստաժի ժամանակահատվածը, որը սահմանված էր «Դատախազության մասին» ՀՀ նախկին օրենքով:

Դիմողը գտնում է, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասում «դատախազ, դատավոր, դատախազության քննիչ» արտահայտությունը օրենսդրի կողմից խտրական մոտեցման դրսևորում է: Այս արտահայտությունը ոչ թե բարելավում է դատախազության աշխատողների կենսամակարդակը, այլ վատթարացնում է նրանց իրավական վիճակը, ինչը հակասում է Սահմանադրության 34-րդ հոդվածին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածում նշված գործերով դիմումները կարող են սահմանադրական դատարան ներկայացվել ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից իր հանդեպ կիրառված դատական ակտի վիճարկման հնարավորությունները սպառելու պահից ոչ ուշ, քան վեց ամիս հետո»:

Սույն գործով վարչական դատարանի վճիռը կայացվել է 17. 12. 2008 թվականին, որի բողոքարկման արդյունքով վճռաբեկ դատարանը 15.04.2009թ. կայացրել է վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում: Վճռաբեկ դատարանի որոշումից հետո դիմումատուն 6-ամսյա ժամկետում ՀՀ սահմանադրական դատարան չի դիմել: Դրա փոխարեն վարչական դատարանի 17.12.2008 թվականի վճիռը վճռաբեկ դատարանում կրկին անգամ բողոքարկել է: 21.07.2009 թվականին, այսինքն՝ վճռաբեկ բողոք բերելու օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո կրկին դիմել է վճռաբեկ դատարան, որը 16.09.2009 թվականին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին՝ գտնելով, որ «սույն վճռաբեկ բողոքը ենթակա է վերադարձման, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը ներկայացվել է օրենքով նախատեսված ժամկետից ուշ, և բացակայում է այն վերականգնելու մասին միջնորդությունը, կամ նման միջնորդությունը մերժվել է»:

ՀՀ սահմանադրական դատարան դիմելու համար օրենքով նախատեսված ժամկետը հաշվարկելիս չի կարող հիմք ընդունվել վճռաբեկ դատարանի վերջին որոշումը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Դիմողը նշում է, որ երկրորդ անգամ վճռաբեկ դատարան բողոք է ներկայացրել՝ ելնելով սահմանադրական դատարանի 27.05.2008 թվականի ՍԴՈ-754 որոշման պահանջներից: Այդ որոշմամբ սահմանադրական դատարանն ըստ էության վերացրել է կրկին անգամ վճռաբեկ բողոք բերելու արգելքը՝ ճանաչելով անձի՝ այլ հիմքով և պատճառաբանությամբ՝ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված եռամսյա ժամկետում կրկին անգամ վճռաբեկ բողոք բերելու իրավունքը: Այսինքն՝ անձը կարող է իրացնել կրկին անգամ վճռաբեկ բողոք բերելու իրավունքը, եթե փոխված է բողոքի հիմքը և երկրորդ անգամ բողոքը ներկայացվել է օրենքով սահմանված եռամսյա ժամկետում: Մինչդեռ այս դեպքում դիմողը վճռաբեկ դատարան երկրորդ անգամ բողոք ներկայացրել է նշված ժամկետն անցնելուց հետո:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետի, 69-րդ հոդվածի 5-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 25-րդ հոդվածի է) կետի, 26-րդ հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետի պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

Քաղաքացի Վալերի Քոսակյանի դիմումի քննությունը մերժել:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ... ՔԱՐՏՈՒՂԱ-ԲՈՒԹՅՈՒՆ

12 փետրվարի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/1-4